

ՀՈԳԵԳՎՈՒՄՏԷՆ ԵՏՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

15 ՅՈՒՆԻՍ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Բացատրութիւն	Էջ 2
Միտոնօրեանք	Էջ 3
Սերտոզուքիւն Մատթէոսի	Էջ 5
Ժամանակացոյց եւ Ծանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐՔԷՆ
(2.5-11)

Եւ արդ, ո՛վ տուն Յակոբի, եկուր Տիրոջ լոյսովը քալենք: Որովհետեւ ահա Տէրը լքեց իր ժողովուրդը, Յակոբի տունը, քանի որ անոնք փղշտացիներուն պէս իրենց երկիրը կախարդներով լեցուցին առաջուան նման, եւ օտար ամուսնութիւններով խառնածին զաւակներ ծնան: Իրենց երկիրը ոսկիրով ու արծաթով լեցուեցաւ, թիւ չունին իրենց գանձերը. իրենց երկիրը ձիերով լեցուեցաւ, հաշիւ չունին իրենց ռազմականքերը: Երկիրը ձեռագործ գարշելի չաստուածներով լեցուեցաւ. կ'երկրպագեն առարկաներու զորս իրենց մատներով շինեցին: Նուաստացաւ մարդ արարածը, ո՛րքան ստորնացաւ մարդը. մի՛ ներեր անոր, Տէ՛ր: Արդ, գացէք ժայռերու տակ ծածկուեցէք կամ ապաստանարանները մտէք, Տիրոջ ահարկու ներկայութենէն եւ անոր փառաւոր գորութենէն փախչելու համար, երբոր անիկա գայ երկիրը հարուածելու: Որովհետեւ հիմա Տէրը իր բարձունքէն կը նայի մարդոց խեղճութեան վրայ. բայց այն օրը մարդոց ամբարտաւանութիւնը պիտի խոնարհի եւ միայն Տէրը ի՛նք պիտի բարձրանայ:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՀՈՒՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ
(9.30-10.4)

Հեթանոսներ, որոնք Աստուծոյ արդարութեան չէին հետեւեր՝ արդարացան, որովհետեւ Քրիստոսի հաւատացին. մինչդեռ Իսրայէլի ժողովուրդը չարդարացաւ Մովսէսի Օրէնքին միջոցաւ, որ տրուած էր մարդիկը արդարացնելու համար: Ինչո՞ւ: Որովհետեւ չհաւատաց Քրիստոսի, եւ կը կարծէր թէ Օրէնքին գործադրութեամբը պիտի արդարանայ: Ատիկա իսկ պատճառ եղաւ որ գլորին՝ «գայթակղութեան առիթ հանդիսացող

քար՝ին վրայ, այսինքն՝ Քրիստոսի, որուն համար մարդարէութեան մէջ գրուած է. «Ահա ես Սիոնի մէջ կը դնեմ քար մը որ գլորումի առիթ պիտի ըլլայ, ժայռ մը՝ որ գայթակղութեան առիթ պիտի հանդիսանայ: Բայց անոր հաւատացողը յուսախար պիտի չըլլայ»: Եղբայրներ, սրտանց կը մաղթեմ եւ կ'աղօթեմ, որ Աստուած փրկէ Յակոբի տունը, որովհետեւ կրնամ անոր մասին վկայել, թէ Աստուծոյ հանդէպ նախանձախնդիր է. միայն թէ այդ նախանձախնդրութիւնը հիմնուած չէ՛ Աստուծոյ ճշմարիտ ծանօթութեան վրայ: Անիկա չհասկցաւ, թէ Աստուած ի՞նչ ձեւով կ'ուզէր արդարացնել մարդիկը. արդարանալու իր հասկցած ձեւին կառչեցաւ եւ ուստի չընդունեց Աստուծոյ արդարութեան ուղին: Մինչդեռ Քրիստոսով Օրէնքը իր լրումին հասած է եւ միայն Քրիստոսի հաւատացողը կ'արդարանայ:

Բայց անոր հաւատացողը յուսախար պիտի չըլլայ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՆՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(13.24-30)

Յիսուս ուրիշ առակ մըն ալ խօսեցաւ անոնց եւ ըսաւ.

«Մարդ մը լաւ սերմեր ցանեց իր արտին մէջ: Գիշեր մը, երբ ամէն մարդ քնացած էր, անոր թշնամին եկաւ, որոմ ցանեց ցորենին մէջ եւ գնաց: Երբ սերմերը աճեցան եւ սկսան հասկ կազմել, այն ատեն որոմն ալ երեւցաւ: Տանտիրոջ ծառաները եկան եւ ըսին անոր. «Տէ՛ր, դուն միայն լաւ սերմեր չցանեցիր՝ արտիդ մէջ. ուրկէ՞ հապա որոմը»: Ան պատասխանեց. «Ասիկա թշնամիի գործ է»: Ծառաները ըսին. «Կ'ուզե՞ս որ երթանք եւ որոմը քաղենք»: «Ո՛չ, պատասխանեց տէրը, որովհետեւ որոմը քաղած ատեն կրնայ ըլլալ որ ցորենն ալ միասին արմատախիլ ընէք: Զգեցէք որ երկուքն ալ միասին աճին մինչեւ հունձքի ժամանակ, երբ հնձուորներուն կ'ըսեմ որ նախ որոմը քաղեն, խուրձեր կազմեն այրելու համար, եւ ապա քաղեն ցորենը եւ ամբարեն շտեմարաններուս մէջ»: «Ահաւասիկ ճիշդ ասոր կը նմանի երկիւնքի արքայութիւնը»:

ՀՈԳԵԳԱԼՈՒԲՍԵՆ ԵՏՔ Ե. ԿԻՐԱԿԻ
(ԾԻԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻԱՆԵՐ - ԹԻ 21)

ԻԱ
ԿԻՐԱԿԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ

I

ԱՌՊԱՐՈՒԹԻԱ ԵՒ ԻՐԱՌԻՄ (ա)

Ի՞նչ է արդարութիւնը եւ ի՞նչ է իրաւունքը, ըստ Աստուածաշունչին: Թէեւ ըստած է, թէ Ս. Գրային իրենց ընկալումին մէջ՝ անոնք էապէս նոյնն են, սակայն աւելորդ է նշելն իսկ՝ որ իբր հոմանիշներ նոյն հարցին կը վերաբերին, բայց պարզապէս տարբեր բաներ են: Երկու բառերուն շաղկապով մը քով քովի դրուելն ալ՝ իր կարգին կը յայտնէ իւրաքանչիւրին տարբերութիւնը միւսէն:

Անոնց համատեղ գործածութեան համարներ.

1.- «...իր որդիներուն եւ իրմէ գալիք տան պիտի պատուիրէ, ու անոնք արդարութիւն եւ իրաւունք ընելու համար՝ Տիրոջ ճամբան պիտի պահեն, որպէսզի Տէրը Աբրահամի վրայ բերէ ինչ որ խօսեցաւ» (ԾՆ 18.9):

2.- «Դաւիթ իր բոլոր ժողովուրդին իրաւունք ու արդարութիւն կ'ընէր» (Բ. Թգ 8.15):

3.- «Արդարութիւնն ու իրաւունքը Քու Աթոռիդ հիմն են» (Սղ 89.14):

4.- «Տէրը արդարութիւն եւ իրաւունք կ'ընէ բոլոր գրկուածներուն» (Սղ 103.6):

5.- «Արդարութիւն եւ իրաւունք գործելը գոհէն աւելի ընդունելի է Տիրոջ» (Առ 21.3):

6.- «Երբ Դաւիթէն արդարութեան շառաւիղ մը պիտի հանեմ, որ թագաւորի պէս թագաւորութիւն պիտի ընէ. իմաստութեամբ պիտի վարուի ու երկրի վրայ իրաւունք ու արդարութիւն պիտի ընէ» (Եբ 23.5):

7.- «Անոնք երկուքն ալ Աստուծոյ աչքին արդար էին եւ իրենց ամբասիր կեանքով կը հնազանդէին Տիրոջ պատուիրաններուն եւ օրէնքներուն» (Ղկ 1.6):

Այս մէջբերեալը միակ տեղն է Նոր Կտակարանին, ուր արդարութեան եւ իրաւունքի գաղափարները միատեղ կան: Գրաբար թարգմանութիւնը երկու գաղափարները աւելի յստակօրէն ունի, կ'ըսէ. «Եւ էին արդար երկոքին առջի Աստուծոյ, գնային յամենայն պատուիրանս եւ յիրաւունս Տեառն անարատք»:

Իրաւունքին գործադրութիւնը իւրաքանչիւր մարդ էակի կենսական կարիքներուն գոհացումն է:

Նկատի ունենալով, որ

ա.- իրաւունքի երեւոյթը լայնօրէն Հին Կտակարանեան է (բառին գործածութիւնը Նոր Կտակարանին մէջ շատ շնչին է),

բ.- եւ արդարութիւնը՝ Նոր Կտակարանին մէջ իբր այլ նշանակութեամբ ալ խորացուած գաղափար կայ, նախընտրելի կը գտնեմ սկիզբը խօսիլ իրաւունքի հասկացողութեան մասին:

Ա.- իրաւունքը:

Եբրայական կրօնական փորձառութեան մէջ,

իրաւունքը Աստուծոյ «Աթոռ»ի հիմքին մէկ տարրն է (հմտ Սղ 89.14): Աստուծոյ «Աթոռ»ը կը խորհրդանշէ Անոր իշխանութիւնը: Արդ, իրաւունքը Աստուծոյ իշխանութեան ստորոգելիներէն մէկն է:

Աստուած ինք իբր Դատաւոր (հմտ ԾՆ 18.25) իրաւունքը կը սիրէ (հմտ Սղ 33.5): Ինք «որքին ու որբեւայրիին իրաւունք կ'ընէ. պանդուխտը կը սիրէ ու անոր հաց եւ հանդերձ կու տայ» (Բ. Օր 10.18): Ան իրաւունք ընելով՝ կ'ազատէ (հմտ Բ. Թգ 18.19, 31): Աստուած իբր ականջներն ստեղծողը կը լսէ գոռոգութեան բոլոր խօսքերը, իբր աչքերն ստեղծողը՝ կը տեսնէ անօրէնութեան բոլոր գործերը, եւ «իր ժողովուրդը» երեսէ չի ձգեր եւ «իր ժառանգութիւնը» չի լքեր (հմտ 94.14):

Բայց՝ ի՞նչ է իրաւունքը:

Անիկա «երկրի վրայ» դարձած Աստուծոյ կարողութիւն մըն է, այլ խօսքով՝ անիկա մարդոց ընկերային կեանքին մէջ Աստուծոյ ի գործ դրած յանձնառութիւնն է, եթէ կարելի է ըսել: Անիկա արդարութիւնը է, ինչպէս ակնարկեցիք. զայն պէտք է շփոթել նաեւ Մովսիսական Օրէնքին հետ, թէեւ օրէնքներուն շատ մօտէն առնչուած է:

Իսկ մարդոց կեանքին մէջ իրաւունքը Տիրոջմէ եկող (հմտ Առ 29.26) «շաւիղներ» է (հմտ Առ 8.20), որ ուղիղ փոխարարութիւններու եւ պարտաւորութիւններու կը վերաբերի: Իրաւունքին

... իրաւունքը պէտք է տիրէ, որովհետեւ անոր աղբիւրը Աստուած իմքն է:

գործադրութիւնը իւրաքանչիւր մարդ էակի կենսական կարիքներուն գոհացումն է: Ոեւէ մէկը պէտք է տուժէ: Ոչ ոք ի վնաս ուրիշին պէտք է շահի. ոեւէ մէկը պատճառ պէտք է ըլլայ ուրիշի մը վնաս կրելուն: Թէ՛ կեանքի առօրեայ զանազան կարիքներուն պարագային, թէ՛ ծիսական կարգի, թէ՛ գործի, եւ թէ՛ դատարանի մէջ՝ իրաւունքը պէտք է տիրէ, որովհետեւ անոր աղբիւրը Աստուած ինքն է: Անիւրաւութիւնը՝ լսել չուզել է Աստուծոյ կամքը, որ իր պատուիրաններուն եւ օրէնքներուն մէջ քալել կը պահանջէ:

Աստուած իր իրաւունքը մարդոց ընկերային կեանքին մէջ ի գործ կը դնէ նաեւ անոնց միջոցով, որոնք զինք լսելով՝ ընկերային կեանքը բարուքելու յանձնառութիւն կ'ունենան եւ կ'աշխատին:

Աստուած աւելի իրաւունքի «շաւիղներ»ուն մէջ քալել կը պատուիրէ քան թէ գոհեր մատուցանել Իրեն (հմտ Առ 21.3): Այս պատուէրը՝ որովհետեւ Աստուծոյ փրկութիւնը պիտի գայ, ըսած է Եսայի մարգարէ (Ես 56.1): Երկրի վրայ ի գործադրութեան իրաւունքը, ուրեմն, փրկութեան կը սպասէ: Իսկ Նոր Կտակարանը կը յայտնէ, որ փրկութեան շնորհքը մարդ էակին տրուած է արդէն Աստուծոյ Որդիին մարդեղացմամբ, խաչելութեամբ եւ յարութեամբ: Ընդդէմ այս է պատճառը՝ որ Նոր Կտակարանին մէջ իրաւունքի մասին խօսքերը շատ քիչ են: Իրաւունքը Օրէնքին ենթակայ եւ հաւատքէ բխող պարտաւորութիւն է, իսկ Աւետարանը շնորհքի աղբիւր եւ հաւատքէ բխող պատասխանատուութեան կոչ է:

II

Օրուայ Ս. Գրային ընթերցումները. Եսայի Մարգարէին՝ 2.5-11: Հռոմէացիներուն Նամակէն՝ 9.30-10.4: Մատթէոսի Աւետարանէն՝ 13.24-30:

Առաջին ընթերցումը: Մարգարէն «Տիրոջ լոյսովը» քալելը իր պատգամը ահագանգային կերպով կը հնչեցնէ: Արդէն ժողովուրդը մոլորած է նիւթական գեղխութեան, այլասերումի եւ կռապաշտութեան մէջ: Տէրը երբ դայ «երկիրը հարուածելու»՝ «մարդոց ամբարտաւանութիւնը պիտի ցածնայ եւ միայն Տէրը ինք պիտի բարձրանայ»: «Տիրոջ լոյսովը» քալելու պատգամին առնչութեամբ. մարգարէն կանխեալ համարի մէջ (2.3) գայն կապած էր Անոր «ճամբաներ»ուն կամ «շաւիղներ»ուն, այսինքն՝ Անոր Օրէնքին եւ Խօսքին:

Երկրորդ ընթերցումը: Առաքեալը Քրիստոսով արդարացման վրայ կը շեշտէ: Ըստ իրեն, Օրէնքը որ տրուած էր մարդիկը արդարացնելու համար՝ չարդարացուց, որովհետեւ մարդիկ «արդարանալու իրենց ձեւին կառչեցան եւ ուստի չընդունեցին Աստուծոյ արդարութեան ուղին»: Օրէնքը չէր կրնար արդարացնել՝ քանի որ Աստուծոյ մասին «ճշմարիտ ծանօթութիւն» չէր տար: Քրիստոսով կ'ըլլայ այն «ճշմարիտ ծանօթութիւն»ը:

Երրորդ ընթերցումը: Որոմինաուկը կը ներկայացնէ: Անիկա պատկերաւոր բացատրութիւն մըն է Երկինքի արքայութեան: Համբերութեան եւ Աստուծոյ վրայ վստահութեան դաս մը կը տրուի: Համբերութիւն՝

ա.- որպէսզի «ցորեն»ները (այսինքն՝ հաւատքի մէջ աճող մարդիկը) «որոմ»ներուն (այսինքն՝ անոնց որ հաւատքին կրնան վնասել) հետ աճին.

բ.- որպէսզի Աստուծոյ կամքը ըլլայ. մարդիկ չէ որ իրաւունքը ունին վճռելու «որոմ»ներուն «քաղուիլ»ը եւ «այրուիլ»ը, նոյնպէս՝ «ցորեն»ներուն «քաղուիլ»ը

եւ Աստուծոյ արքայութեան մէջ «ամբարուիլ»ը, այլ՝ Աստուած:

Համբերութիւնը հաւատքին կենսունակութիւնը կը յայտնէ, որովհետեւ Աստուծոյ արդարութեան կ'ապաւինի:

Ի՞նչ է այն կորիզը, ուր երեք ընթերցումները կը միանան:

Արմատական վստահութիւն Աստուծոյ արդարութեան, եւ ոչ թէ՛ մարդկային «մատներով» շինուած կամ մարդկային մտքին համաձայնող արդարութեան: Հաւատաքի մարդը վնասակար տարրերը կորստեան մատնելու իր փութկոտութեան մէջ՝ արմատախիլ կրնայ ընել նաեւ անոնք՝ որ հաւատաքի մէջ կ'անին: Հաւատքի մարդը «Տիրոջ լոյսովը», հետեւաբար համբերութեամբ կը քալէ:

Հովսէ ԳԶ



ՄԻՒՌՆՈՐՀՆԷՔ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արագ Վեւափառ ՀայրաՄեսի Խօսք

7 Յունիս 2008-ին Անթիլիասի կաթողիկոսարանին մէջ տեղի ունեցաւ սրբազան միւռոնօրհնէք, որուն ընթացքին Վեւափառ Հետեւեալ չորս կէտերուն մէջ ամփոփեց իր մտածումները.-

Միւռոնը երաշխիք՝ Հայ եկեղեցւոյ յաւերժութեան:

Սուրբ միւռոնի օրհնութեան ընթացքին դուք տեսաք, թէ հին միւռոնը խառնուեցաւ նոր միւռոնին: Սա ձեւական աւանդութիւն մը կամ պատահական երեւոյթ մը չէ: Ան կը խորհրդանշէ Հայ եկեղեցւոյ յաւերժական գնացքը: Եկեղեցին աստուածաբանական իմաստով ժամանակի ու միջոցի մէջ շարունակուող առաքելութիւն է՝ իր ճշմարիտ էութեամբ: Եկեղեցւոյ կեանքին ու առաքելութեան մէջ անցեալը, ներկան ու ապագան ներքին սերտ յարակցութեամբ մնայուն ներկայութիւն են:

Ո՛չ ժամանակը եւ ո՛չ ալ պատմական պայմանները կամ աշխարհագրական տարածութիւնները կրնան անջատում յառաջացնել եկեղեցւոյ կեանքին մէջ: Աստուածաբանական յիշեալ յղացքէն անդին, մեր եկեղեցւոյ մէջ Սուրբ միւռոնն է Սուրբ Հոգւոյ ներգործութեամբ ներկայ այն հոգեւոր ուժը, որուն ճամբով եկեղեցին կը մերժէ անցեալ դառնալու որեւէ մտածողութիւն ու փորձ, եւ կը մնայ միշտ ներկայ՝ իր ընթացքը ուղղած դէպի ապագայ: Հին միւռոնի ճամբով այսօր նոր միւռոնին կու գան խառնուելու, իրենց հաւատով

Եկեղեցւոյ կեանքին ու առաքելութեան մէջ անցեալը, ներկան ու ապագան ներքին սերտ յարակցութեամբ մնայուն ներկայութիւն են:

ու տեսիլով Սուրբ Գրիգոր Լուսաւորիչները ու Ներսէս Շնորհալիները, եւ յարաբերաբար նոր ժամանակներու՝ Սահակ ու Զարեհ կաթողիկոսները եւ իրենց յաջորդող հայրապետները: Հետեւաբար, կենդանի պատմութիւն է այս միւտոնը: Միւտոնով օծուիլ, կը նշանակէ կենդանի հաղորդութեան մէջ մտնել մեր ժողովուրդի ու եկեղեցւոյ պատմութեան հետ: Հայ եկեղեցւոյ միւտոնը ստանալ, կը նշանակէ գՔրիստոս իրենց կեանքին մէջ կեանքի վերածած մեր հայրապետներուն, սուրբերուն ու նահատակներուն հաւատով ու սրբութեամբ դրոշմուիլ:

**Միւտոնը սրբազան շաղախ՝
Հայ եկեղեցւոյ անքակտելի միութեան:**

Քիչ առաջ, դուք նաեւ վկան դարձաք այնքան հոգեպարար դէպքին, երբ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միւտոնին եկաւ խառնուելու Ամենայն Հայոց կաթողիկոսութեան միւտոնը: Նոյն այս դէպքը պիտի կրկնուի այս անգամ Ս. Էջմիածնի մէջ, սեպտեմբերին, երբ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան միւտոնին պիտի գայ խառնուելու Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միւտոնը:

**Մէ՛կ է հայ
եկեղեցին**

Խորհրդանշական այս երեւոյթը պերնախօս վկայութիւն մըն է հայ եկեղեցւոյ անբաժանելի միութեան: Մէ՛կ է հայ եկեղեցին իր ծնունդով ու իր առաքելութեամբ. մէ՛կ է հայ եկեղեցին իր հաւատով եւ իր ծառայութեամբ: Պայմաններու բերումով ու անհրաժեշտութեան հետեւանով հայ եկեղեցւոյ կեանքին մէջ յառաջացած Նուիրապետական Աթոռները ո՛չ մէկ ձեւով կրնան խախտել Հայ եկեղեցւոյ միութիւնը: Ահաւասիկ, սա պահուն նո՛յն Հայ եկեղեցւոյ նո՛յն միւտոնին օրհնութեան մասնակից կը դառնան մեր կողմին, Ամենայն Հայոց կաթողիկոսութեան, Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան եւ Կոստանդնուպոլսոյ Հայոց պատրիարքութեան ներկայացուցիչները: Դա՛րձեալ, նոյն այս գօտեպնդիչ տեսարանը պիտի կրկնուի այս անգամ Ս. Էջմիածնի մէջ, Սեպտեմբեր ամսուն: Որեւէ ժամանակէ աւելի մեր ժողովուրդը պէտք ունի իր ներքին միասնականութեան ամրապնդման՝ միասնաբար դիմագրաւելու համար մեր հոգեւոր, մշակութային ու ազգային ինքնութեան սպառնացող վտանգները, Հայաստանի թէ՛ Սփիւռքի մէջ: Միւտոնած սա պահուն եղբայրական ջերմ սիրով կ'ողջունենք Մեր հոգեւոր եղբայրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն հայոց կաթողիկոսը, ինչպէս նաեւ Երուսաղէմի հայոց պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ արք. Մանուկեանը եւ Կ. Պոլսոյ հայոց պատրիարք Ամեն. Տ. Մեսրոպ արք. Մուրաֆեանը՝ իրենց մաղթելով եկեղեցաշէն ծառայութեամբ հարուստ երկար գահակալութիւն:

**Սուրբ միւտոնը հրաւէր՝
Հայ եկեղեցւոյ կեանքին մասնակցութեան:**

Հայ եկեղեցին սոսկ կառոյց ու ծէս, նուիրապետութիւն

ու դաւանանք չէ, այլ՝ քրիստոնէական հաւատքին վրայ կառուցուած մեր ժողովուրդի գաւակներուն ամբողջութիւնն է: Սուրբ միւտոնի նամբով մենք անդամ կը դառնանք եկեղեցւոյ ամբողջութեան, անոր համայնական կեանքին: Սուրբ միւտոնով կը դրոշմուի մեր գաւակները. Սուրբ միւտոնով կ'օծուին եկեղեցւոյ կեանքին մէջ օգտագործուող բոլոր սպասները. Սուրբ միւտոնով կ'օծուի եկեղեցւոյ քարեղէն շէնքը, Սուրբ միւտոնով կ'օծուին Քրիստոսի Աւետարանը քարոզելու կոչուած եկեղեցւոյ բոլոր սպասաւորները: Մեր եկեղեցւոյ հաւաքական կեանքին մասնակցութեան առաջնորդող նամբայ է Սուրբ միւտոնը: Եկեղեցւոյ աստուածատուր առաքելութիւնը, աւետարանչութիւնը ու ծառայութիւնը ժողովուրդին տանող երկնային ուժ է Սուրբ միւտոնը: Այս գիտակցութեամբ պէտք է մօտենանք միւտոնին: Զմոռնանք, որ մեր նակատներուն վրայ դրոշմուած է Հայ եկեղեցւոյ դարաւոր Սուրբ միւտոնը: Հաւատարիմ պէտք է ըլլանք Սուրբ միւտոնին, եւ մեր կեանքով ու գործով պէտք է արժեւորենք անոր խորհուրդն ու պատգամը:

**Սուրբ Միւտոնը աղբիւր
Հոգեւոր վերանորոգութեան:**

Եկեղեցին իբրեւ առաքելութիւն, կենսական կարիք ունի ներքին վերանորոգութեան: Միւտոնը Սուրբ Հոգւոյ վերանորոգիչ ու վերակենսաւորիչ ներկայութիւնն է եկեղեցւոյ կեանքին մէջ: Անոր նամբով է, որ եկեղեցին կը մնայ կենսունակ իր կեանքով եւ ուժական իր առաքելութեամբ՝ ժամանակի ժանգի ու փոշիին դէմ: Սուրբ միւտոնի ներկայութեամբ է, որ եկեղեցին իր հոգեւոր կեանքը կը վերանորոգէ ու կը մաքրէ ամէն տեսակ ապականիչ թափանցումներէ: Ներկայ աշխարհի մարտահրաւերներուն դիմաց, մեր եկեղեցին որքան հրամայական ու անյետաձգելի կարիք ունի ներքին՝ հոգեւոր վերանորոգման, որպէսզի ժողովուրդի կեանքին մէջ, իր առաքելութիւնը դարձնէ աւելի ազդու ու կազմակերպ: Մեր եկեղեցւոյ կեանքէն նառագայթող հոգեւոր արժէքներու ներթափանցումը մեր գաւակներու կեանքին մէջ, հոգեւոր պայծառակերպումը մեր ժողովուրդի կեանքին, աւետարանական ճշմարտութիւններու կենսագործումը մեր անհատական, ընտանեկան թէ՛ հաւաքական կեանքին մէջ, կը նկատենք առաջնահերթութիւն մեր եկեղեցւոյ համար: Արդ, Սրբալոյս միւտոնի օրհնութիւնը Ս. Էջմիածնի եւ Անթիլիասի մէջ մեր եկեղեցւոյ համար պէտք է դառնայ հոգեւոր վերանորոգութեան վերակենսունակնացման հաւատքի առաքելութեան ու հզօրացման առիթ ու հրաւէր:

**Ներկայ աշխարհի
մարտահրաւերներուն
դիմաց, մեր եկեղեցին
որքան հրամայական
ու անյետաձգելի
կարիք ունի
ներքին՝ հոգեւոր
վերանորոգման**

Գոհուրիւն ու փառք կու տանք Աստուծոյ, որ այս երրորդ միւռոնօրհնէքն է, որ կը կատարենք իբրեւ հայրապետ Մեծի Տանն Կիլիկիոյ: Սրբալոյս միւռոնի այս օրհնութիւնը կը նուիրենք մեր նոր սերունդին, այն սերունդին, որ կոչուած է կերտելու մեր եկեղեցւոյ, մեր ազգին ու հայրենիքին պայծառ ապագան:

Ով հայ պատանի ու պատանուհի, երիտասարդ ու երիտասարդուհի, Անթիլիասի միւռոնաբոյր մայրավանքէն սա պահուն հայրական խօսքս քեզի կ'նշուի:

21-րդ դարու համաշխարհայնացած աշխարհին մէջ մեր քրիստոնէական հաւատքը, մեր հոգեւոր նշմարտութիւններն ու բարոյական արժէքները հարցականի տակ դնող նոր կենցաղակերպերու ու մտածելակերպերու դիմաց, դիւրին չէ նշմարտօրէն քրիստոնեայ ըլլալը:

21-րդ դարու ազգ ու մշակոյթ փանդող, ինքնութիւն ու աւանդութիւն գունաթափող համաշխարհային մշակոյթին դիմաց դիւրին չէ նաեւ հայ մնալը:

Հետեւաբար, արթուն կաց . հպարտ եղիր քու հոգեւոր ու ազգային արժէքներովդ, որոնց պահպանման ու յաւերժացման համար արիւն թափեցին քու պապերդ: Դուն քու նախնիքդ վրայ ունիս դրոշմը հայ միւռոնին: Ամուր պահէ հաւատքդ, անբիծ՝ հայ միւռոնը, ու ներկայ աշխարհի փոթորիկներուն մէջ կեանքդ վերածէ հոգեւոր ու ազգային արժէքներով օծուն միւռոնաբոյր կեանքի:



ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԵՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

*Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ
Խմբագիր՝ Գառնիկ Ք. Գ.*

Փառուս Դէոր Եգրոսնու*
«Երբ մոգերը Բեթլեհէմէն մեկնեցան, Տիրոջ հրեշտակը Յովսէփի երեւցաւ երազի մը մէջ եւ ըսաւ. - Ե՛լ, ա՛ն մանուկն ու անոր մայրը եւ փախիր Եգիպտոս. հո՛ն մնա մինչեւ որ ըսեմ քեզի, որովհետեւ Հերովդէս կը փնտռէ մանուկը՝ զայն սպաննելու համար: Յովսէփ արթնցաւ, գիշերով առաւ մանուկն ու անոր մայրը եւ գնաց Եգիպտոս, ուր մնաց մինչեւ Հերովդէսի մահը: Այս ձեւով իրականացաւ Տիրոջ խօսքը, Ովսիա մարգարէի բերնով ըսուած. - Եգիպտոսէն կանչեցի իմ որդիս» (2.13-15):

Ահա դարձեալ Տիրոջ հրեշտակը երազի մէջ կ'երեւնայ Յովսէփի: Նախապէս ալ երազի մէջ եկած էր (1.20), որպէսզի Մարիամի անբծութեան մասին վկայէր եւ յայտնէր՝ թէ անկէ ծնելիքը «իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ»:

Յովսէփ քունէն կ'ելլէ եւ աճապարանքով կ'առնէ մանուկն ու անոր մայրը եւ Եգիպտոս կ'իջնէ: Հերովդէսի ձեռքը այնտեղ չէր հասներ:

Եգիպտոս այն ատեն հռոմէական իշխանութեան ենթակայ երկիր էր: Հինէն հրեայ մեծ գաղութ մը կար հոն:

Շատ հաւանաբար դէպի Եգիպտոս փախուստի դրուագով աւետարանիչը երեք բաներ ի մտի ունէր.

ա.- ցոյց տալ լրումը Ովսիա մարգարէի կանխասացութեան թէ՛ «Եգիպտոսէն կանչեցի իմ որդիս»:

բ.- շեշտել Աստուծոյ ազատութիւնը՝ նոյնիսկ մեղքի գերութեան խորհրդանիշ երկիր մը ընտրելու եւ զայն ծառայեցնելու իր փրկագործական ծրագրին:

գ.- Տիպաբանել Յիսուսի Նոր Մովսէս ըլլալը (ամբողջ աւետարանին երկայնքին Մատթէոսեան ծրագրին է Յիսուսը ներկայացնել իբր Նոր Մովսէսը: Մեր այս հատուածին մէջ այդ ծրագրին կապուած երկու տարրեր տեսանելի են.

1.- Հայր Յովսէփի ընտանեօք Եգիպտոս փութալը կը յիշեցնէ Յովսէփ նահապետի եւ իր գերդաստանին նոյն երկիր էջքը եւ հաստատուիլը: Ուր պիտի աճէին ու բազմանային անոնք, եւ ուրկէ Մովսէս մարգարէի առաջնորդութեամբ դուրս պիտի գային:

Եգիպտոսը Յակոբի սերունդին փրկութեան ապաստանարան եղաւ, թէեւ ետքը գերութեան վայր պիտի ըլլար:

2.- Ինչպէս Մովսէս մարգարէ փառաւորներն արհուլումէն խոյս տուաւ եւ ապրեցաւ անապատային Մադիամի մէջ: Ապա երբ իր կեանքը փնտռող «բոլոր մարդիկը մեռան» - Ել 4.19-, վերադարձաւ Եգիպտոս: Նոյնպէս ալ Հերովդէսի արհուլումէն հեռացուած մանուկ Յիսուսը «Իսրայէլի երկիրը» վերադարձաւ, երբ զինք «սպաննել ուզողները մեռան»):

Ովսիա մարգարէն կատարուած մէջբերումին մասին կարճ բացատրութիւն մը:

Մարգարէին խօսքը կը վերաբերի երբայցի ժողովուրդին: Սակայն աւետարանիչը զայն հասկցած է իբր Յիսուսի համար ըսուած կամ մարգարէութիւն մը՝ որ իր լրումին հասաւ Յիսուսի Եգիպտոսէ կանչուելով:

ՄԱՆՈՒԿԵՐՈՒ ԶԱՐԵ:

«Իսկ Հերովդէս, երբ տեսաւ որ մոգերը զինք խաղի բերին, սաստիկ զայրացաւ եւ մարդիկ դրկեց, որպէսզի սպաննեն Բեթլեհէմի մէջ եւ անոր շրջակայքը գտնուող բոլոր երեխաները, որոնք երկու տարեկան եւ կամ անելի փոքր էին, նկատի առնելով Յիսուսի ծննդեան ժամանակը, որ ստուգած էր մոգերէն:

Այսպէս իրականացաւ այն՝ ինչ որ Տէրը Երեմիա մարգարէին բերնով կ'ըսէ։-

*Գոյժ մը լսուեցաւ Ռամայի մէջ,
որք, հեծեծանք եւ լացուկոծ դառնագին.
Ռաքէլ իր գաւազաններուն համար կու լար
եւ մխիթարուիլ չէր ուզեր,
քանի այլեւս անոնք չկային» (2.16-18):*

Հերովդէս ծածկելով իր չար մտադրութիւնը, մոգերուն պատուիրած էր, ըսելով. «Գացէք եւ ստոյգ տեղեկութիւններ քաղելով գտէ՛ք երեսան, եւ երբ գտնէք՝ ինծի իմացուցէ՛ք, որպէսզի ե՛ս ալ գամ եւ երկրպագեմ իրեն» (2.8): Ան պարապ տեղը սպասած էր մոգերուն վերադարձին, որովհետեւ անոնք երազի մը մէջ Աստուծոյ իրենց եղած հրահանգին հնազանդելով՝ իրենց երկիրը գացած էին:

Հերովդէս հրաման կը հանէր եւ Բեթլեհէմի եւ անոր շրջակայքի մինչեւ երկու տարեկան տղաքը սպաննել կու տար:

Այս դէպքը կը թուի իր մէջ կրել հալածախտէ տառապող թագաւորին ոճրային վերջին ցանկութեան արձագանգը: Ըստ որուն, ան հրամայած էր իր մահուան օրը ամէն տունէ մէկը սպաննել, որպէսզի իր մեռնելուն սուգը մեծ ըլլար (Յովսէփոս Պատմիչ):

Երեմիա մարգարէէն մէջբերումը (31.15) իր բուն շրջագծին մէջ ի՞նչ կ'ըսէ:

Ռաքէլ իր գերեզմանէն կ'ողբայ, կը հեծեծէ, կու լայ եւ կուրծքը կը կոծէ իսրայէլացիներուն համար, որոնք ասուրիներուն կողմէ գերի տարուած էին: Շարունակութեան մէջ մարգարէին միջոցով Տէրը ըսած է. «Գու ձայնդ լալէն եւ աչքերդ արցունքէն դադրեցո՛ւր: Վասնզի քու գործիդ համար վարձք կայ ու թշնամիին երկրէն պիտի դառնան» (Եր 31.16): Թէեւ Իսրայէլի ցեղերուն նախնիները իրմէ չծնան, սակայն Երեմիա զայն ընտրած է իբր ազգին մայրերուն խորհրդանիշը, որովհետեւ ան Յակոբ Նահապետի նախընտրածն էր (ծանօթ է, որ նահապետին առաջին կինն էր Լիա), եւ որովհետեւ Բենիամինը ծննդաբերած ատեն «չատ դժուարութիւն» պիտի քաշէր եւ հոգին փչելու վայրկեանին՝ փոքրիկին անունը Բեն-օնի դնէր, որ կը թարգմանուի «նեղութեանս որդին» կամ «վշտիս որդին»:

Ռաքէլ դէպի Բեթլեհէմ ճամբու վրայ պիտի մահանար եւ թաղուէր «Եփրաթայի ճամբան, որ Բեթլեհէմ է» (Մն 35.19): Ըստ Երեմիա մարգարէի, անոր գերեզմանը Ռամայի մէջ էր: Այս անհամաձայնութիւնը աւետարանիչին հարց չէ եղած: Ինչպէս Ռաքէլ մայրը չէր Իսրայէլի ցեղերու նախնիներուն, նոյնպէս մայրը չէր Յակոբ Նահապետի Յուդա որդիին, որուն ցեղին ժառանգութիւնն էր Բեթլեհէմը: Նման մարգարէին՝ աւետարանիչն ալ Ռաքէլը տեսած է իբր խորհրդանիշը ազգին վշտալից մայրերուն:

ԵԳԻՊՏՈՒԷՆ ՎԵՐԱՊԱՐՈՒՄ:

«Հերովդէսի մահէն ետք, ահա Տիրոջ հրեշտակը Եգիպտոսի մէջ Յովսէփի երեւցաւ երազի մը մէջ եւ ըսաւ.՝ Ե՛լ, ա՛ն մահուկն ու անոր մայրը եւ վերադարձիր Իսրայէլի երկիրը, որովհետեւ մահուկը սպաննել ուզողները մեռան:

Յովսէփ ելաւ, առաւ մահուկն ու անոր մայրը եւ վերադարձաւ Իսրայէլի երկիրը: Սակայն երբ լսեց որ Արքեղայոսը թագաւորած է Հրէաստանի վրայ՝ իր հօրը Հերովդէսի տեղ, հոն երթալու վայրացաւ: Փոխարէնը, երազի մը մէջ իրեն հրամայուածին համաձայն՝ գնաց Գալիլիայի կողմերը եւ եկաւ բնակեցաւ Նազարէթ քաղաքին մէջ, որպէսզի իրականացայ ինչ որ Տէրը կ'ըսէ մարգարէներուն միջոցաւ, թէ Նազովրեցի պիտի կոչուի» (2.19-23):

Հերովդէս կը մահանար եւ Հրէաստանի վրայ կը թագաւորէր որդին՝ Արքեղայոս Ն. Ք. 4-ին: Արքեղայոս եւս իր հօր պէս անգթութեան հռչակ պիտի ունենար: Իր գահակալութիւնը պիտի սկսէր 3000 քաղաքացիներու կոտորածով: Ան շատ կարճ պիտի թագաւորէր եւ տասը տարի վերջ պաշտօնազրկուելով՝ Վիեննա պիտի աքսորուէր:

Հատուածին մէջ վերստին Տիրոջ հրեշտակը Յովսէփի կ'երեւնայ երազի մէջ եւ անոր պատուէր կու տար մանուկն ու անոր մայրը առնելով Իսրայէլ վերադառնալ, որովհետեւ «մանուկը սպաննել ուզողները» մեռած էին: Այս նախադասութիւնը յստակօրէն Յիսուսի Եգիպտոսէ վերադարձի պատմութիւնը կը կապէ Մովսէսի Մադիամէ Եգիպտոս վերադարձի պատմութեան, ինչպէս ակնարկեցի: Այդ է անոր պաշտօնը, այլապէս անհասկնալի է, մանաւանդ որ Արքեղայոս «իր հօրը Հերովդէսի տեղ» եկած էր:

Յովսէփ ընտանեօք կը վերադառնայ, սակայն լսելով Արքեղայոսի թագաւորելը, կը վախնայ, եւ ըստ երազով իրեն հրամայուածին՝ կ'երթայ Գալիլիայի կողմերը եւ Նազարէթի մէջ կը բնակի: Այդպէս կ'իրականանար, կ'ըսէ աւետարանիչը, «մարգարէներուն միջոցաւ» ըսուածը՝ թէ Յիսուս «Նազովրեցի» պիտի կոչուի:

Հետաքրքրական է, որ մարգարէներուն մօտ չկայ նախադասութիւն մը, որ կ'ըսէ, թէ Յիսուս Նազովրեցի պիտի կոչուի: Նազարէթ անունը երբեք չէ յիշատակուած Հին Կտակարանին մէջ:

Ուրեմն, ինչպէ՞ս հասկնալ աւետարանիչին հաստատումը:

Կը թուի, որ երբ աւետարանիչը «մարգարէներուն միջոցաւ» կ'ըսէ՝ ընթերցողը կը զգուշացնէ, թէ ինք բառացի մէջբերում պիտի չկատարէ: Դարձեալ «թէ»-ով ալ նոյնը կը հասկցնէ, որ ըսելիքը բառացի վերաբրտագրութիւն մը պիտի չըլլայ:

Աւետարանիչի ըսածին մասին հետեւեալ վարկածները կան.

Առաջին. ըստ Յովհան Ոսկեբերանի, «Նազովրեցի պիտի կոչուի» կանխասացութիւնը հրէական

կորսուած գրականութենէ (պարականոն) կու գայ, եւ Մատթէոս քաղած է զայն Քրիստոսով մարգարէութեանց լրումի իր թեզին տարր մըն ալ աւելցնելու համար:

Երկրորդ. աւետարանիչը Դաւիթեան մեսիայի իր քրիստոսաբանութիւնը մտքին՝ ճայնական նմանութեան վրայ հիմնուելով Եսայի մարգարէի 11.1-ի «Ն-է-Յ-ե-Ր»ը նկատի ունեցած է՝ «Նազովրեցի»ին համար: «Ն-է-Յ-ե-Ր»ը «չառաւիղ» կը նշանակէ: Քանի «մարգարէներուն միջոցաւ» ըսած է աւետարանիչը, ուստի ճիշդ եղած է մարգարէներուն մէջ որոնել մեսիային կապուած նոյն բառը, եւ գտնուած է միայն հոմանիչը Ես 4.2-ի, Եր 23.5-ի, 33.15-ի եւ Զք 3.8-ի եւ 6.12-ի մէջ. հոմանիչն է «Յ-ե-Մ-ա-Խ»: Ասիկա «ընծիւղ» կը նշանակէ: Եւ ինչպէս ծանօթ է քրիստոնէական մեկնաբանութիւնը աւետարանիչին աւանդութենէն, այսինքն՝ քրիստոնեայ առաջին համայնքներէն սկսեալ, մարգարէական «չառաւիղ» եւ կամ «ընծիւղ» բառերուն մէջ Քրիստոսը պիտի տեսնէր:

Երրորդ. աւետարանիչը կամ իր աղբիւրը «Նազովրեցի»ին տակ տեսած է կամ լսած «Ն-ա-Զ-ի-Ր» բառը, որ կը նշանակէ սուրբ մարդ կամ մարդ որ ինքզինքն ուրիշած է Աստուծոյ ծառայելու: Մկ 1.24-ի, Ղկ 4.34-ի, Յճ 6.69-ի, ԱԳ 3.14-ի, Ա. Յճ 2.20-ի եւ Յյտ 3.7-ի մէջ Յիսուսի համար գործածուած են այս արտայայտութիւնները. «դուն Աստուծոյ սուրբն ես», «Աստուծոյ սուրբը» եւ «սուրբը»: «Ն-ա-Զ-ի-Ր» բառը գործածուած է ԹԼ 6, Դտ 13.5-7, 16.17, Ամս 2.11-12.1 եւ Ա. Մկ 3.49-52 համարներուն մէջ: Արդեօ՞ք «մարգարէութիւններուն միջոցաւ»ը այդ համարներուն ակնարկութիւն է: Եւ այլն:

Որքան ալ վարկածները տրամաբանական ըլլան, հարցը բաց կը մնայ:

Այս բաժինը փակելէ առաջ կ'ուզեմ կարճ անդրդադառնալ երազի երեւոյթին:

Առաջին գլխուն մէջ մէկ անգամ (հմր 20), իսկ երկրորդ գլխուն մէջ չորս անգամ (հմրք՝ 12, 13, 19, 22) երազով Աստուծոյ կամքի յայտնութեան ակնարկութիւն կատարուած է: Ուստի, քանի մը խօսք երազի Աստուծաշնչական հասկացողութեան մասին:

Հին աշխարհին մէջ երազները տեսնուած են իբր միջոցներ, որոնցմով աստուածներ իրենց կամքերը կը յայտնէին մարդոց: Հին Կտակարանը իբր միաստուածեան սրբազան գրականութիւն՝ Աստուծոյ կամքին յայտնութեան միջոց տեսած է երազները: Բայց ոչ բոլոր երազները: Քանի որ կան երազներ՝ որոնք պարապ են (հմմտ Ժդ 5.7): Քիչերն է, որ պատգամ ունին (նոյն):

Թուոց գիրքին մէջ գրուած է. «Եթէ ձեզմէ մէկը մարգարէ ըլլայ, ես Տէրս ինքզինքս տեսիլքի մէջ կը ճանչցընեմ անոր, կամ երազի մէջ կը խօսիմ անոր հետ: Բայց իմ ծառաս Մովսէս այնպէս չէ, որ իմ

բոլոր տանս մէջ հաւատարիմն է: Անոր հետ բերնէ բերան, յայտնապէս կը խօսիմ եւ ոչ թէ առակով ու ան Տիրոջ կերպարանքը կը տեսնէ» (ԹԼ 12.6-7): Ուրեմն,

Աստուած երազներու միջոցով կը խօսի ընտրեալներուն՝ որոնք սակայն Մովսէսի պէս չեն: «Հաւատարիմ» բառը այստեղ ակնարկութիւն է այն խորագոյն հաւատքին՝ որ Մովսէս ունէր: Ուշագրաւ է, որ Յիսուսի ծննդեան աւետումի գրուագին մէջ Աստուծոյ հրեշտակը Մարիամի կու գայ ոչ թէ երազի մէջ, այլ անոր «մօտ» (Ղկ 1.26-27), մինչդեռ Յովսէփի կ'երեւնայ երազի մէջ (Մտ 1.20):

Հակառակ երազի այս ընկալումին, հետաքրքրականօրէն Հին Կտակարանի առաջին երազը, որ Գերարայի թագաւոր Աբիմէլէքի տեսածն է (Ծն 20.3-7), Աստուծոյ եւ Աբիմէլէքի միջեւ յստակ բառերով խօսակցութիւն մը կը ներկայացնէ: Կան շարք մը այլ երազներ ալ՝ որոնք յստակ բառերով խօսակցութիւններ կը ներկայացնեն: Ուրեմն, Թուոց գիրքին ըսածը ի՞նչ է:

Երազով աստուածային կամքին յայտնութիւնը որքան ալ որ յստակ ըլլայ, անիկա չունի արթուն ատեն «յայտնապէս» խօսակցութեան ապահովութիւնը, որովհետեւ սուտ երազն ալ կայ, որ իրականի պէս կ'ըլլայ, բայց արթննալէ ետք կը տեսնուի, թէ սուտ էր (հմմտ Ես 29.8):

Աստուածաշունչին մէջ խորհրդանշական երազներ ալ կան, որոնց վերծանումը ամէն մարդու գործը չէ, այլ անոնց՝ որոնք Աստուծոյ կողմէ այդ շնորհքը ստացած են. այսպէս՝ Յովսէփ նահապետը կամ Դանիէլ մարգարէն:

Այսօրուայ մարդուն երազները պարապ են առհասարակ, որովհետեւ ան շատ զբաղած է նիւթապաշտ իր վազքով, եւ առիթ չունի իր հոգին բանալու Երկինքին: Աստուծոյ բացուած հոգիները՝ երկնային պատգամ բովանդակող երազ կը տեսնեն:

(Շարունակելի 6)

* 2.13-23-ի համառօտ մեկնութիւնը խմբագիրին կողմէ կատարուած է:



**ՅԱԶՈՐԻ ԸՄԲԹՈՒՄ
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅ**

Յինգշաբթի, 19 Յունիս 2008

11.00 > Աղօթածողով՝

Ս. ՅԱԿՈԲ քոյրերու ժողով

Շաբաթ, 21 Յունիս 2008

18.30 > Ս. Գրային սերտողութիւն՝

Յայ երիտասարդներուն համար

Կիրակի, 22 Յունիս 2008

09.30 > Առաւօտեան ժամերգութիւն

11.00 > Ս. եւ անմահ Պատարագ

ՀԻՄՆՈՒՆԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՆ

Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.

Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանին.

514 331 5445 x203 կամ 514 909 5203 քիփին:

Սոյն թերթիչը ե-նամակով ստանալու

չաւար Ձեր ե-ՀԱՍՅԷՆ ռոյրարկեժէք

eglise58@sourphagop.com-ին

**ՅԱՏՈՒԿ ՅԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ
ԱՐԴԻ ԹԵՄԱՆԵՐՈՎ՝**

**ԱՌԱՔԵՄԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ
ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ**

ԱՍԷՆ ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՆԵՐԸ
ԺԱՍԸ 6:30



**Հոգեւանգստեան Ձեր
արձանագրութիւնները նախօրօք
կանարեժէք կա՞րողելով
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԳՐԱՍԵՆՆԵԱԿ**

**ՀԱՄԱՅԵՐԱ ՃԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԸ**

ԲՆՅ Է

ԵՐԿՈՒԵԱԲԹԻՒՆ ՈՒՐԲԱԹ
ԺԱՄԸ 8.30-ԷՆ 16.00

ՀԱՃԵՅԷՔ ԿԱՊՈՒԽԻ ԸԱՐՏՈՒԴԱՐԻՆ՝
514 331 5445 x202
ԿԱՄ ՀՆՈՎԻՒՆ՝
514 331 5445 x203
ԿԱՄ ԳՐԵԼ ՀԵՏԵԻՄԱԿ Ե-ՀԱՍՅԷՐԻՆ՝
eglise58@sourphagop.com